ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը **ՀՀ արդարադատության նախարարություն**
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հայաստանի Հանրապետության վարչապետի 2025 թվականի մայիսի 08-ի թիվ 383-Ա որոշում**
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը **ՀՀ արդարադատության նախարար Սրբուհի Գալյան** *(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)*
4. Գործուղման վայրը **Սինգապուրի Հանրապետություն (Սինգապուր)**
5. Գործուղման ժամկետները **2025 թվականի մայիսի 26-30-ը**
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ **հրավիրող կողմի միջոցների հաշվին**

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը- *(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլ*

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		**Սրբուհի Գալյան**	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)		
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	0	0
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	0	0
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	0	0
	Օրերի քանակը	4	

	Ընդամենը (դրամ)	0	0
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	0	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	0	
	Օրերի քանակը	5	
	Ընդամենը (դրամ)	0	0
Այլ ծախսեր			
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր (*Սպասարկում ՊՊ սրահում*)	0	0
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		0	0

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **ԷԴԳԱՐ ՀՈՎՍԵՓՅԱՆ**

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՍՐԲՈՒՀԻ ԳԱԼՅԱՆԻ՝ ՍԻՆԳԱՊՈՒՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ՍԻՆԳԱՊՈՒՐ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝ Սրբուհի Գալյան, Արդարադատության նախարար:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Սինգապուրի Հանրապետություն (Սինգապուր), 2025 թվականի մայիսի 26-ից 30-ը:

Հրավիրող կողմը՝ Ասիական զարգացման բանկ:

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն «Վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմներ և արդյունավետ դատական համակարգի լավագույն փորձ» («Alternative Dispute Resolution and Efficient Court System Best Practices») խորագրով բարձր մակարդակի այցին:

Քննարկված թեմաները՝ Քննարկվել են Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումների օրակարգին, մասնավորապես՝ դատաիրավական բարեփոխումներին և այս համատեքստում դատական համակարգում առկա խնդիրներին և դրանց հնարավոր լուծմանը, ինչպես նաև Սինգապուրի արդարադատության և դատական համակարգին, վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմների կիրառությանն առնչվող և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Արդարադատության նախարար Սրբուհի Գալյանի գլխավորությամբ Հայաստանի պատվիրակությունը, որի կազմում էին Բարձրագույն դատական խորհրդի նախագահ Արթուր Աթաբեկյանը, Արդարադատության նախարարի տեղակալ Տիգրան Դադունցը և Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գոռ Հակոբյանը,

Նախարարը հանդիպումներ է ունեցել Սինգապուրի Հանրապետության արդարադատության համակարգի առանցքային մարմինների բարձրաստիճան պաշտոնյաների, այդ թվում՝ Սինգապուրի արդարադատության նախարար (Minister of law) Էդվին Թոնգի, Սինգապուրի միջազգային արբիտրաժային և միջազգային հաշտարարության կենտրոնների ղեկավարների, ակադեմիայի ներկայացուցիչների հետ:

Սինգապուրի արդարադատության նախարար Էդվին Թոնգի հետ հանդիպմանն Արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը ներկայացրել է արդարադատության ոլորտի բարեփոխումների օրակարգը, մասնավորապես՝ անդրադարձ է կատարել դատաիրավական բարեփոխումներին և այս համատեքստում դատական համակարգում առկա խնդիրներին և դրանց լուծման հնարավոր մեխանիզմներին:

Սինգապուրի արդարադատության նախարարը կիսվել է իրենց արդարադատության համակարգի հաջողված փորձով՝ ներկայացնելով վերջին տասնամյակների ձեռքբերումները և կարևորելով օրենսդրության բարելավումն ու կայուն ինստիտուտների ստեղծումը, ինչպես նաև գործերի քննության հստակ ժամկետների և կանոնների նախատեսումը:

Հանդիպման ընթացքում Սինգապուրի արդարադատության նախարարության ներկայացուցիչները ներկայացրել են նախարարության ընդհանուր աշխատանքը՝

գործունեության ուղղությունները, դատական համակարգի կառուցվածքը, առկա խնդիրները և դրանց լուծման ուղիները:

Հանդիպման ավարտին երկու երկրների արդարադատության նախարարները ձեռք են բերել պայմանավորվածություն՝ նախարարությունների միջև փոխըմբռնման հուշագրի կնքման ուղղությամբ: Հուշագրով կամրագրվեն երկու նախարարությունների միջև համագործակցության ուղղությունները, ինչը լրացուցիչ խթան կհանդիսանա այդ շրջանակներում առկա փոխգործակցության խորացման համար:

Սինգապուրի միջազգային արբիտրաժային և միջազգային հաշտարարության կենտրոնների ղեկավարները հայաստանյան պատվիրակությանը ներկայացրել են կենտրոնների աշխատանքը, գործառույթները, խոսել միջազգային արբիտրաժի և հաշտարարության առանձնահատկությունների մասին: Հանդիպման ընթացքում շեշտվել է Միջազգային հաշտարարության Սինգապուրի կոնվենցիայի կարևորությունը: Արդարադատության նախարարը ընդգծել է, որ Հայաստանն այն ստորագրել է, և ներկայումս քննարկումներ են իրականացվում վավերացման ուղղությամբ:

Արդարադատության նախարարը իր հերթին Սինգապուրյան գործընկերներին տեղեկացրել է Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի (AMCA) մասին՝ շեշտելով, որ վերջինիս ստեղծումը կարևոր քայլ էր Հայաստանում վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացման ուղղությամբ: Սրբուհի Գալյան ներկայացրել է նաև AMCA-ի գործունեության պատմությունն և ձեռքբերումները:

Հարկ է նշել, որ Արբիտրաժի և հաշտարարության կենտրոնի ստեղծման ընթացքում Սինգապուրի միջազգային արբիտրաժային կենտրոնը մասնագիտական խորհրդատվություն է տրամադրել, ինչպես նաև իրականացրել աշխատակիցների վերապատրաստումներ՝ կիսվելով իրենց հարուստ փորձով:

Կողմերը քննարկել են համագործակցության հետագա հնարավոր ուղղությունները հատկապես մասնագիտական զարգացման և փորձի փոխանակման ծրագրերի շրջանակներում:

Հանդիպման ավարտին Արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը Սինգապուրի միջազգային արբիտրաժային և միջազգային հաշտարարության կենտրոնների ղեկավարներին հրավիրել է մասնակցելու սեպտեմբերի 3-5-ը կայանալիք՝ Հայաստանի միջազգային արբիտրաժային շաբաթին:

Արդարադատության նախարար

Սրբուհի Գալյան
04.06.2025 թ.